

4840

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Գրեց՝

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ (ՍԵՂՈ)



Երևան

1935

891.99

Z-30

.19 NOV 2011

891.99
Z-30

my.

ՔԱՌԵԱԿՆԵՐ

Գրեց՝

ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ



Մարտի

1935

4840

4840

4840

ՆՈՒԷՐ
 Խորհրդային Հայաստանի
 Տասն եւ հնգամեակին



8857-56





ՍԱՐԳԻՍ ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

« Էս կրակից, որը կրծքիս
ժալքերումն է բռնկուած,
Արեգակը լոկ մի բոց է
երկնքումը բռնուած... : »
ՀԱՅՐՁ



ՔԱՌԵԱԿՆԵՐ



Բանւորը պալատ շինեց, նորաձեւ, բազմաթիւանի,
Ո՛հ, ի՛նչ զեղեցիկ : Մէջը նստողին, հաղա՛ր երանի :
Բայց ինքը ինկա՛ւ վերէն, սուզուեցա՛ւ, տես դեռ
կը սուզուի...
Ինկա՛ւ, սուզուեցա՛ւ, մեռա՛ւ բանւորը... տես դեռ
կը մեռնի...



Թէ օգուտ չունիս հսկայ շէնքերէն,
Որո՞նք շինեցիր քրտինք թափելով...
Կազ դիր յատակին... թող փոշի դառնայ...
Որ քեզի չեղաւ... ուրիշին ալ չըլլայ...



Արա՛ր աշխարհը եթէ դէմս կենայ,
 Ու վտանգները առջեւ դիզուին,
 Դարձեա՛լ կը մընամ ԻՏԷԱԼԻՍ վըրայ :
 Այս իմ մէկ տողիս, ես ինքս եմ վըկայ :



Այլեւս մենք մեծերնուս գլուխ չենք ծըռեր,
 Ու խոնարհելով ոտքերնին լիզեր...
 Գլուխ ծըռելը էշուն է տրուեր.
 Կամ այն ոչխարին, որ գայլին է կեր :



Եկուր միասին պտոյտ մը ընենք,
 Խօսի՛ր, ազատ ես, այն ի՛նչ որ կ'ուզես...
 Իսկ եթէ դուն ալ զիս մտիկ ընես,
 — Սա խեղճին կեանքը սրտիդ խորէն տե՛ս...



Վատոզի մարդէ օգուտ մի սպասեր,
 Ան կ'օգտուի քեզմէ, փոխան դու անոր...
 Չե՞ս գիտեր, աշխարհ վատի բերնին մէջ լօխում է
 դարձած...
 Իսկ քեզի համար՝ միակ ու միակ — ոսկոր մը
 կըծուած...



- Այսօր լեռները ձիւնով ճերմակ են,
- Ու ճամբաները ճերմակ հազած են...
- Ծառին տալերը բամպակ դարձած են...
- Ա՛խ, ինչո՞ւ միայն աղքատ սրտերը սեւ են...:



Անօթի փորդ՝ դատէ հաստափորին հետ,
 Բարակցած վիզդ խոզավիզին հետ,
 Հալ ու մաշ կեանքդ շփացածին հետ,
 Անկէ վերջ միայն, մեր ետեւէն ե՛կ...



Տե՛ս, սա գրողը, միշտ սէրը կ'երգէ,
Վրան գլուխը հագուստէ զուրկ է...
Երգել սէրը, ոչ թէ կոիւր անօթի փորով,
Թոյլ տուէք ինձի, յիմարութիւն է :



Գրող մը աշխարհն սոխի նմանցուց,
Ու իր աչքերէն արցունք հոսեցուց...
Ես ալ կ'ըսեմ, — աշխարհ (աղքատ) պղպեղ մ'է,
Ո՛վ որ համն առնէ՝ ներսդին կը կրծէ :



Ճշմարտութիւնը ինչո՞ւ կը լըքես,
Պատառ մը հացի, եսի մը համար...
Քալէ՛ դու միշտ, վե՛հ ու ճակատաբաց,
Զի օր մը ինձ պէս, ոսկոր պիտ ըլլաս :



Տղեկ մը անտուն՝
Երգիքի մը տակ,
Կը նիրհէր սակայն
Սառած միայն գտան...



Տխուր սիրտ մը
Սփոփել կ'ուզե՞ս,
Կտոր մ'ուրախ սրտէդ
Պէտք է բրջնես...



Երջանիկ մարդ
Որ ըլլալ կ'ուզես,
Ուրիշին քիթը
Երբե՛ք չարիւնես...



Գիրուկ պուրժուան,
Նման է գազան,
Մե՛ր գարկով միայն
Կ'իջնէ գերեզման...



Աշխարհ և արեւ
Մեղուի պէս են...
Ոմանց նուշ, մեղր են,
Ոմանց կը կըճեն :



Կեանքը՝ գեղեցիկ
Աղջկան մը պէս է...
Ո՞վ որ կը ԽԱՔէ
Կուսութիւնը կ'առնէ...



Երբ դուն ճիշդ խօսիս, հոգի՛ս,
Քաղցած կը մնաս...
Իսկ երբ սուտ խօսիս, մի կերպ,
Եօլա կը գնաս...



Գրած տողերուս մէջ, մօրըս
էն շատ տեղը տուի ես...
Սակայն նրա կարճ խելքը,
Թէ զինք, թէ զիս մեռցրեց :



Զմերուկի նման է,
Տիեզերքը կլոր...
Ունեցողը կ'ուտէ
Միայն, միջուկը ազլոր :

25-4.588



Փարթամ ու հարուստ
Կեանք մը ապրիլը,
Ուրիշին կեանքը
Գողնալուն մէջ է...



Իրաւունքը՝ հոգի՛ս,
Մարդոցմէ չը յուսաս,
Թէ՛ մազգէր ունիս,
Գործածել գիտցիր :



Աղքատին՝ ցաւէն
Մազը կը թափի...
Ճաղատ հարուստին՝
Նոր մազ կը բուսնի :



Գնա՛, գնա՛, գաղափար,
Սլացի՛ր վե՛ր, յաղթական...
Գնա՛, մտի՛ր այն տեղ ուր,
Քու մասին չեն գիտեր բան :



Դուն աշխարհիս ցանեցիր,
Ո՛վ իմ կարմիր գաղափար,
— Այն հունտը, որ մեզ պէտք էր,
Դեռ կը ցանես անդադար :



Սովետներու երկիրը,
Պիտի աճի անդադար...
Իսկ պուրժուա աշխարհը,
Պիտի մեռնի, անպատճառ :



Ես քեզ կ'ատեմ՝ ունեւոր,
Ձե՛զ ալ կ'ատեմ, գահ-աթոռ...
Կ'ատեմ քե՛զ ալ տիքտաթոր,
Ձի՛ « ո՛չ ոք է թագաւոր » :



Բնութենէն լաւ սրտով,
Խնդրեցի, ինչ որ կայ...
Նա ինձ ասաց՝ չարիքով.
— Հեռացի՛ր, քեզ կեանք չը կայ :



Բընութենէն վատ սրտով
Խնդրեցի բլուղան (1)
Նա ինձ ասաց ժպիտով
— Հիմա քուկդ է ամէն բան :

(1) Հարստութիւն.



Աշխարհի բիւր բանւորը,
Ո՛չ հաց ունի, և ո՛չ տուն...
Պուրժուայի պարզ շունը,
Ունի պիւֆթէկ և թէ տուն :



Ունեւորը՝ յաղթանդամ,
Կերաւ, խմեց, փառք տուաւ...
Չ'ունեւորին՝ խորդ անդամ,
Շնչառութիւնն հոտեցաւ :



Օր մը ինչպէս երազիս՝
Տեսայ ՅիՍՈՒՍ Աստուածին,
Ըսաւ — բարեւ իմ հօտիս,
— Գլուխնուն ճարը թող նային :



Քոռնիս մէջ կարգ մը մարդիկ,
Թագ մը դրին գլուխիս...
Ըսին — Չարդէ՛ անխնայ,
Ո՛վ որ մեզի դէմ կենայ :



Պատերազմին՝ զինուոր մը
Նամակ առաւ ծնողքէն,
Սակայն հազիւ աւարտեց,
Գնդակ մը իր գանկը ծակեց :



Չորս գաւակներ կը նայէր,
Պետրոս էմմին, — թէև ծեր...
Օր մ'ալ տխուր լուր առինք...
Մեքենան գանկն էր ծակեր :



Թոնակ մը թռաւ տալէն,
Թռաւ, քնա՛ց խաղալէն...
Տղեկ մ'ելաւ անկիւնէն,
«Կտոր մը հաց» մուրալէն :



Մեռա՛ւ, ձմրան՝ աղքատիկ
Դրացիիս մէկ տղան...
Այն օրը երբ որ յիշեմ,
Իմ դարտերս կը շատնան :



Մեր կեանքը՝ ինձ նման է,
— Մի տանջանքուտ երազի...
Չի երկուքէն ալ միայն,
Արթննալով կ'աղատուի...



Յուզումնայից ճիշէ մը,
Սիրտս ճղմուեց, — վեր կեցայ,
Ըսին՝ եղածը ոչինչ է,
Սատկածը պարզ ձի մըն է :



Նորապսակ արուին,
Ասին տարին, ուզմադաշտ...
Էդի թափած արցունքէն,
Այտերն եղան լճադաշտ :



Հարուստն առած իր էգին,
Մտաւ ՀԱՅ-ԼԱՅՖ ճաշարան...
Աղքատն առաւ սոխ ու հաց,
Գնաց դէպի գործարան :



Կեանքը՝ մարդկային
էն լաւ բանն է...
Հարցո՛ւր հարուստին,
Ան շատ լաւ գիտէ :



Կեղծիքը՝ փայլող
Շինծու գարդ մըն է...
Որքան ալ փայլի,
Պիտի ժանգոտի :



Ճշմարտութիւնը՝
Երկաթէ ոռմբ մ'է,
Երբ ժամը հասնի,
Ուժգին կը պայթի...



Բարկութիւնն՝ ըսես,
Սառած օձ մըն է...
Տաքցած բոպէին
Միայն կը խայթէ :



Իյնալ բարձրէն ցած՝
Բոպէի գործ է...
Բարձրացի՛ր միշտ վեր,
Մեծութիւնն հող է :



Կ'ըսես թէ՛ ես մարդ եմ մեոցուցած,
Կ'ըսես ուրիշին «վաստակն եմ կերած»,
Քանի այսքանը դուն լաւ հասկցար,
Ինձի պէս վատ մարդ դուն ա՛լ մի ըլլար :



Ինչպէս կանաչութիւնը բնութենէն է,
Շատ պարզ է, սնունդն ալ բնութենէն է...
Հարուստը բերնիդ հացը երբ կ'առնէ,
Գլխուն հարուածը՝ օր մը կը գտնէ,
Զի այդ մէկն ալ «բնութենէն» է :



Սա թշուառ օրիս երբ որ կը յիշեմ,
Պալատ, հնչուն ոսկի, խաղեր ու ճազեր...
Հաճոյքի ձեւեր, և ինչե՛ր, ինչե՛ր...
Ո՛հ, կ'ուզեմ աշխարհ կուրծքիս տակ թաղել :



Արիւն խմելու դարձեալ ծարաւ էք,
Ու մըցման ելած դանակ կը սրէք...
Զգո՛յշ, այս անգամ թակարդը չիյնաք,
— Արիւն-քրտինք-թոյն, տես ի՛նչ պիտ' խմէք :



Ուր տեղ որ երթամ՝ թշուառութիւն է,
 Ճամբան թէ այլուր՝ դէմս թշուառ կ'ելլէ,
 — Դրամ, քաղցր կեանք, որո՞ւ է տրուած,
 Թշուա՛ն բարեկամ, քիչիկ մը խորհէ՛ :



Առանց ընկերի՝ կեանքը ի՞նչ կ'արժէ,
 Աշխարհը առջեւդ ոչնչութիւն է...
 Առանց ընկերի մարդս որ կ'ապրի,
 Չորցած ծառ մըն է, առանց տերեւի :



Առհասարակ պուրժուա երկիրներու մէջ,
 Քեզ շատ կը յարգեն, երբ որ մեռած ես...
 Զիս յարգողը՝ թող յարգէ չմեռած,
 Զի երբ որ մեռնիմ, յարգի պէտք չունիմ :



Սա՛ դրօշի բանին խելքս չի հասնիր,
 Համնողինը՝ թող մեզ բացատրէ.
 Ըսենք՝ կարմիր է դրօշակը մեր,
 Երբ սեւի ներկենք, գոյնը չի՞ փոխեր :



Դրօշակ, մրօշակ, ատոնք սուտ բան են,
 Տգէտ զանգուածին ջիղը կը գրգռեն...
 « Առնեմ դէօշս երթամ կողուի դաշտ,
 Հոգ չէ թէ մեռնիմ, դրօշս մնայ, դրօշս անյաղթ » :
 Այսպէս կը գոռայ տգէտը համբակ,
 « Կեցցէ՛ հայրենիք, կեցցէ՛ դրօշակ » :



Անուշ խօսքէ դուն մի՛շտ զգուշացիր,
 Որ չըլլայ թէ քեզ թակարդը ձգէ...
 Մարդոց մորթը թէև մէկ տեսակ կ'ըլլայ,
 Անոր տակ ի՛նչ մուրթ գոյներ կը վխտան :



Քեզի դաս ըլլայ, պայքարող բանւոր,
Հաւատք չընծայե՛ս մտքով գործողին...
Ձի, ան գանձի, եսի մարմաջը ունի,
Յիշէ՛ պատուէրը մեր մեծ Լենինին :



Հմայիչ խօսքին, խելացի բառին, կրակոտ ճառին,
Իր սուտ յուզումին, հաւատք չընծայես...
Վերապահ եղիր, կատարեալ դատող իր ամէն գործին,
Զխափուիս և թէ ամէն մարդ մէկէն Լենին չկարծես :



Սեւ ժամանակ, սեւ օրեր,
Սեւ սեւ տարի շա՛տ տեսանք...
Հէ՛յ տառապած սեւ հոգիս,
Ո՞ր չար բախտին դուռն հասանք :



Բանւորը ժամանակներու մէջ ստրուկ մըն էր,
Ու ժամանակը անոր տիրական...
Ահա՛ կ'ուզայ ժամը որ ստրկատէրը կ'ըլլայ ստրուկ
Ու բանւորն ալ ժամանակին տէրն ու տիրական :



Թող յետադիմող մ'եղած ըլլամ ես,
Հակաճառողն ալ՝ իբր յառաջատես,
Խրատ մը սակայն, փորձառու կեանքէս,
ՔԼՕՐՕՖՕՐՄԸ քթիդ երբե՛ք չդնես :



Աշխարհ նման է ֆութպոլ գնդակի,
Է՛ն, զայն կը վայլէ, ով առիթ ունի...
Աշխարհն ԱՇԽԱՐՀ է, կը կարծես շատեր,
Խաղցուած խաղերը արդեօք չե՞ն տեսներ :



Ա՛հ, սոսկալի է նա մարդուս ձեռքում,
Որով, մէկուն ձեռքով միւսն են մեռցնում.
Որքա՛ն կ'ատեմ այդ՝ զգալ կարող չէք,
Որուն զէնք, փամփուշտ անուն տալիս էք :



Բայց որքան ալ որ ես նրան ատեմ,
Գէթ ժամանակ մը պիտի գործածեմ...
Ճիշտ է, զզւանքով նրան ձեռք կ'առնենք,
Սակայն մենք ենք որ պիտ' նրան թողնենք :



Ձէնքին դէմ գէ՛նք, իսկ ջարդին դէմ ջա՛րդ,
Կուի դէմ կոի՛ւ՛ ներկայ ժամանակ...
Ձեռքերդ ծալլելով երբ նստիս հանդարտ,
Երբե՛ք չես կարող տանիլ յաղթանակ :



Երբ պատերազմի ծախքերն վերցուին,
Ու այդ գանձերը գիտութեան տրուին...
Մինչեւ աշխարհիս մարդիկն բազմանան
Աւազ, ովկեան, Սահարան ծառոտ կը գտնան :



Թռչնիկը խաղաղ ատենը կ'երգէ,
Զուարթ կ'ըլլայ ու ճիւ-ճիւ կը խաղայ...
Ապա, աշխարհն ալ երբ ԽՍՀՄ-ը ըլլայ,
Մարդկութեան գլխուն բարիք կը տեղայ :



Սոխակ մը սիրուն, ինձ այսպէս երգեց,
Ո՞վ դու մարդ էակ, ինչո՞ւ ես քաղցած,
Ու կը սլքտաս, դու կամքէ լքուած
Միթէ այլոց պէս դուն ալ մարդ մը չե՞ս...
Ինչո՞ւ ըմբոստ չես ու կը քնանաս յիմար արարած :



Այրուած սրտերը, ա՛հ, շատ ու շատ են,
 Ինչպէս իմ սիրտը, կտոր մը կրակ,
 Նման խմբնիս, բոլորին ալ չկայ սփոփանք
 Սեւի փոխան կարմիր չըլլայ երբ աշխարհք:



Փոթորիկի պահուն միա՛յն աղբը օդը կ'ելլէ,
 Ու կլոր կլոր վեր կը բարձրանայ...
 Բանւորն ալ մէկ ճակատ երբ ոտքի ելլէ,
 Գոռոզ պուրժուան պիտի մահանայ:



Կենդանիներու բոյնին խնամք կը տանին,
 Ու ամէն առտու զայն կը մաքրեն որ աղբ չմնայ,
 Աշխահն ալ նման կեղտոտ աղբով է լի,
 Աւել սրբելու շատ կը կարօտի:



Կեցի՛ր ըոպէ մը, բոպէ մը մուսա,
 Կեցի՛ր՝ ու սա անո՛ւշ նուագը լսէ...
 Աշխարհի շարիքը աչքիս առջեւ է,
 Գիտե՞ս այս ցաւը մեզի ո՞վ կուտայ,
 — Ես շատ խորհեցայ՝ պուրժուան գտայ:



Մի՛ խօսիք հետս, երբ նուագի ձայն կայ...
 Ցաւերու պատմութիւնը առջեւս կուգայ,
 Գիտե՞ք այդ ցաւը մեզի ո՞վ կուտայ,
 — Ես շատ խորհեցայ՝ դարձեալ պուրժուան գտայ:



Առանց պահանջի՛ ըստանալ չըկայ,
 Առանց բողոքի, ճնշում կը բանի,
 Առանց ըմբոստ հոգու, գերի կը լինիս,
 Առանց բոռնցքի, ստրուկ մ'ես միշտ:



Կեանքի անուշն ու լեզին հո'ս է անա,
Տիրողին համար՝ յաւէտ անուշ է նա.
Տիրւողին համար, երթանք քայլ մը ետ,
Որուն կեանքը միշտ եղած է դառնաւետ :



Այնինչ որ կ'ըսեմ իմ սրտիս խորքէն,
Ո՛չ գրութիւն է և ո՛չ ալ արուեստ,
Այլ, արդար կանչ և բողոք մը համեստ :



Ահա՛ կ'ուզայ նա, անվա՛խ, յաղթակա՛ն...
Աշխարհ կը դողայ անոր քալուածքէն,
Հագած է երկաթ, մարմինն է կրակ,
Ու կարմիր վառած՝ ինչպէս արեգակ :



Կ'ըսեն թէ Յիսուս մեզ համար մեռաւ,
Ճիշդ է թէ սխալ, թող այդպէս ըլլայ,
Քանի որ մեր մեղքին համար զոհուեցաւ,
Ինչո՞ւ անդի աշխարհքը դժոխք մը դրաւ,
Կամ անդ աշխարհք դժոխք մ'որ դրաւ,
Ինչո՞ւ եկաւ ու մեզի համար զոհուեցաւ :



Երբ մէկը քեզի գէշութիւն ըրաւ,
Մէկէն մի պոռթկար, սակայն խորհէ լաւ,
Ո՞վ լաւ է խորհեր ու յետոյ գործեր,
Արդիւնքը վաղուց իրեն է օգներ :



Մարդու մը ցաւէն գու՛թդ կը շարժի...
Սակայն որքան ալ
Այդ, այդպէս ըլլայ,
Պատանու լացէն սիրտդ կը պատռի :



Կեանքի մէջ մարդիկ ընկերներ ունին,
ինչպէս որ երկինք՝ բիւրաւոր աստղեր...
Բայց երբ ցաւ ունիս ու կամքէ լքուած,
Հեռու կը մնան, քեզ վաղուց մոռցած :



Ազատութիւնը երբ որ ես կ'երգեմ,
Լեռներն ու ձորեր ինձ կ'արձագանգեն...
Բայց եղո՛ւկ ինձի, ինչ որ ալ պատմեմ
Կոյրին, յիմարին, պարապի կ'ելլեմ :



Ան որ փարթամ կեանքի մէջ է միշտ,
Ո՛չ ցաւ ունի, ո՛չ հոգ, ո՛չ վիշտ :
Բայց ով ցաւ ունի, ով հոգ, և ով վիշտ,
Փայլող հայլիին ետեւն է նա ճիշդ :



Եթէ կ'ուզես աշխարհը վայելել,
Դարձուր աչքերդ դու կին էակին,
Նայե՛ր ես երբեք կնոջ մը աչքին...
Ա՛հ, այդ է միայն սիրոյ բանալին :



Աշխարհի վրայ չարին չարը կայ,
Ու չարին զոհը կը նստի կ'ուլայ :



ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՄՈՒՍՈՒԻՆԻ

Հէ՛յ Մուսօլինի, արիւնի ամբար,
 Որքա՛ն խմեցիր, դեռ չկշտացա՞ր...
 Բա՛ւ է այլեւս, արիւնոուշտ գազան,
 Ձի ամէն վատ բան ունի իր վախճան :



Ա՛հ, որքա՛ն մայրեր, ու որքա՛ն քոյրեր,
 Արցունք ու արիւն մէկ տեղ թափեցին,
 Որքա՛ն գաւակներ, որքան բանւորներ
 Բանտեր լեցուցիր, զարկիր, մեռցուցիր...



Քո ըրածը՝ մեր սրտերուն վրայ
 Ձիֆթով գրեցինք ու պիտի մնայ,
 Երբ դու Մեծ Չարը և Ռուսիան յիշես...
 Գանկդ պիտ պայթի, պիտի ցըրիւ գայ :



Արիւնով շաղուած պատմութիւնը քո,
 Գովոզներ եղան՝ թէ՛ կեղծ, թէ՛ իրաւ,
 Արիւնարբու գործերդ գովելու համար,
 Թէքէեանի բերնէն լորձունք թափեցաւ :



Մենք Թէքէեան չենք, կլոր, հաստափոր,
 Ոչ ալ ֆաշիզմէն սպասող՝ լաւ օր :
 Մենք ձեզի այնպէս հարուած պիտի տանք
 Որ դուք խենթենաք, ըլլաք շան սատակ :



Պէնիթօի հայրը երկաթ կը ձեծէր՝
 Միայն մարդկութեան բարիքին համար :
 Մուսօլինին ունի երկաթէ ակոսյ,
 Ու օրն ի բուն մարդու միտ կ'աղայ :



Վա՛յ քեզ, Պէնիթօ, վա՛յ Մոուսօլինի,
Գիտե՛ս, տաս տարի՛ ինչ գործեր ըրիր...
— Բանւորը զարկիր, գեղջկին խաբեցիր...
Աղքատէն առիր, հարուստին տուիր:



Քաշէ՛ ձեռքերդ, Հապէշի երկրէն
Որ կրթել գիտե՛ս, ինքզինքդ կրթէ,
Ըսենք թէ անոնք « վայրի » կը մնան,
Քե՛զ ի՞նչ անուն տանք արիւնոուշտ գազան:

Է՛հ, քո վախճան ալ ահա՛ հեռու չէ
Ահա՛ մահուան հովը՝ քեզ ալ կը փչէ՛,
Թող քու տէրերը լան, ողբան, սըգան,
Մենք պիտի տեսնենք սովետ Իտալիան:



ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՀԻՌԱԷՐ

Հէ՛յ, յիմարամիտ, ստորին գաճաճ,
Դատարկամիտ զլուխ, ուղեղ փճացած,
Քեզմէ շատ հզօր Ձարերը տեսանք...
Ուշ չէ, այդ օրը, քեզ ալ կը տեսնանք:



Հէ՛յ, արիւնարբու, էշազգի (1) զաւակ,
Դու, ո՞ւր կը թուիս, այդքան ալ արագ...
Արծիւ չի կարծես դու քեզ, աւանակ,
Թեւերդ կը փրթին, կ'իջնաս դու յատակ:



Աւանակի զլխին
Դրին մի լաւ սանձ...
Խեղճ էշը ցնցւեց,
Ինքզինք ձի կարծեց:

ՄԱՆՈՅ.— (1) ամականը գերման հրեայ աշխարհա-
հոչակ բանաստեղծ Հանուի Հայնէինն է: Ակնարկը
անշուշտ Թեոու ազգայիններու մասին է:



Հիթլէ'ր, յաղթանակդ յաղթանակ չէ դեռ,
Յոխորտանքներուդ վերջը չեկա՞ւ դեռ,
Ծագող արեգակին միայն մի' դիտեր...
Ականջ դիր խօսքիս, Չարին միտքդ բեր :



Գալիքին դէմ բռնութեամբ չես կարող կուրի,
Կրնա՞ս ձմեռը գարնան վերածել,
Հէ՛յ, յիմար Հիթլէր, ստոր բռնակալ,
Ձի հնչեց փողը միջնասիծնալ :



Մեծամիտ Հիթլէր, ա՛յ յիմար տղայ,
Յաղթանակներուն յաղթանակը կայ...
Յաղթանակներ կան աժան՝ կարճ տեւող...
Յաղթանակներ ալ՝ դարերով ապրող :



Թթու ազգային, Ռասիստ, կ'ըսեն քեզ,
Ինտո՞ր կ'ըլլայ այդ, զիտնալ կ'ուզեմ ես,
Խնդիր մը կայ, որ դեռ չեմ հասկըցած,
Լեմո՞ն ես կերած թէ քացախ խմած :



Գիրքեր այրելով, հրեայ ատելով,
Բանւոր ջարդելով՝ փսսդ կը փորես...
Ճիշդ է, քու փոսդ փորողներ շատ կան,
Բայց յիմար քայլէդ էլ, պիտի բազմանան :



Երբ դուն բանւոր ես, զիտակից՝ ինձ պէս,
Քու շահիդ պաշտպան, կուող զինակից...
Հիթլէրը որքան կատղած շուն դառնայ,
Աշխարհն մեր կ'ըլլայ, մեզի կը մնայ :



Հիթլեր - Մուսօլինի որքան ալ ճգնին,
Դարձեալ կարող չեն ընթացքն արգիլել,
Սոսիալիստական անեղ հոսանքին...
Պէտք է ֆաշիզմին դէմ պայքար տանիլ,
Համնելու համար սովէտ աշխարհին :



ՀՀ Ազգային գրադարան



NL0349854

38088

ՆՈՅՆ ՀԵՂԻՆԱԿԻՆ ԿՈՂՄԷ
Հրատարակելի են
Բանաստեղծութիւններ,
Պ ա ս մ ա լ ա ծ ֆ ն ե ՚



ԳԻՆ 5 ՅՐԱՆՔ
